

րեին զսահմանեալ ժամս գիշերոյն¹. Եւ հասեալք ի լոյս առաւատուն՝ սուրբ կաթողիկոսն Հայոց Յոհան արիւնէր զամենեսեան, քաջալերեցուցանելով ասէր. «Յուսացեալքն յԱստուած ոչ երբեք ամաչեցին. եւ ընտիր անաւթ սուրբ Հոգւոյն Պաւղոս² գոչէ համարձակածայն բարբառով եւ ասէ. *Յոյս երբեք ոչ ամաչեցուցանէ, յորոց սիրտս³ սերն Աստուծոյ սփռեալ է*^ա: *6 Ձաւրացարո՛ւք ի տէր եւ ի զաւրութիւն բազկի Նորա, եւ կարող լինիք զամենայն նետս*⁴ *մուխս չարին շիջուցանել, զերեւելիս եւ զաներեւոյթս*^{5բ}: *7 Եւ մի՛ որ ի բազմութիւն զաւրու անաւրիւնացն հայեցեալ զարհուրիցի ինչ. վասն զի լինելով ընդ ձեզ Աստուած՝ բազմագոյնս զձեզ ցուցանէ Նոցա, եւ շարժեալ իբրեւ զխռիւ ի սաստիկ հողմոյ, ցրուեալ ընդ երեսս դաշտացոյ եւ բլրոց՝ վեր ի վայր կորուսանէ: 8 Արդ՝ արիւնեսցէ զձեզ աջ հզաւրին եւ զաւրացուցէ զձեզ, առաջնորդեսցէ եւ յաղթող արասցէ. նմա փառք եւ Որդւոյ իւրում եւ սուրբ Հոգւոյն յամենայն յաւիտեանս. ամէն»:*

9 Եւ ասացեալ ամենեցուն զամենս՝ պատրաստեցան ի պատերազմս. եւ զինեալ գունդքն Հայոց ընդդէմ թշնամեացն՝ լինէր եւ երանելին Յոհան յաղաթս: *10* Սկսանէր այնուհետեւ զաւրավարն Հայոց Վահան Մամիկոնեան յարիւնել ըստ պատշաճի զհւրաքանչիւր կողմն ճակատուն: *11* Չմիջոց կողմնն բազում այրուծիովն տայր ի ձեռն լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի. եւ ի կողման աջոյ թելին կարգէր զԲաշդ Վահեւունի զԲաբգէնն Սիւնի եւ զԱտոմն Գնունի եւ զՓապակն Պալունի, իւրաքանչիւր այրուծիով եւ այլ եւս յաւելուածով. եւ յահեկէ կողմանէ հանդերձ ուխտասէր Կամսարականաւքն եւ իւր սիրելի եղբարքքն, Վահանաւ, Ներսէհիւ եւ Հրահատաւ. եւ ընդ աջմէ⁶ իւրաքանչիւր այրուծիով գնդացն՝ կազմէր զինքն: *12* Պատրաստէր եւ զայլ արս աւագս ընտիրս այրուծիով հանդերձ եւ Վրեւաւ Վանանդացով⁷. առ որս եւ առաքէր զՊապ Արտակունեաց, զայր ոստանիկ, զորդի Բաբոցի, ասել ցհւրաքանչիւր կողմանց⁸ աւագս, թէ «Չնշանս հզաւրագոյն արանց, զոր յառաջագոյն տեղեակ եմք զարանց Պարսկաց եւ զԿատշաց եւ զգնդին Սիւնեաց՝ տեսանեմ զի դէպ ի մեզ դիմեալ գան. արդ՝ դուք մեղմով երթայք, եւ ուշադրեալ հայեցարո՛ւք ի մեզ. թող մեզ նախ լինի յարձակել. եւ

1 Ձ. գիշերոյն

2 ՏՏ. չիք Պաւղոս

3 ՏՏ. սիրտ

ա Հռոմ. Ե 5

4 Ձ. զնետս

5 ՏՏ. զաներեւոյթ

բ Հմմտ. Եփես. 2 10, 16:

6 Ձ. ընդ յաջմէ

7 ՏՏ. Վանանդացով

8 ՏՏ. չիք կողմանց